

ԲԱՆԱՍՏԵՂԺՈՒԹԻՒՆՆԵՐ

Հ Ո Ս Է, Հ Ո Ս Է

Հոսէ՛, հոսէ՛, առուակ սիրուն,
Անցիր, սիրտըս ողողէ.
Թող ջինջ կաթիլ քո ջրերուն
Ցամփած սրտիս շիթ ցօղէ:

Ծագէ՛, արե՛ւ, քո ճաճանչներ
Սառած սրտիս խորշերուն.
Քո ճաճանչով հալիմ սառեր,
Սրտիս բերեմ նոր գարուն:

Երգէ՛, քրոջնի՛կ, երգէ՛ անուշ,
Անձայն հոգուս դու երգ տուր.
Թող արձագանգ հնչէ մեղուշ
Ձայնըդ՝ հոգւոյս իմ տըխուր:

Զմրան վերջին ամպոս օրեր,
Անցէ՛ք եւ դուք, շուտ անցէ՛ք.
Դարձի՛ր, գարուն, ծառ, ծաղիկներ,
Սրտիս ամպեր ցրուեցէ՛ք:

3 Փետրուար 1889

* * *

Անուշի՛կ իմ երգ,
Սուր թեւեր ունիս, քրոիր անդ գրեա՛
Ուր մարած կրակի դեռ մոխիրը կայ,
Երգէ՛ քո հին երգ:

Երգէ՛ ու մարած
Երկնից կըրակի մոխրած կայծերուն
Հով շընչէ՛, թող բոցն ելնէ՛ ճարճատուն
Վերեւ կամարած:

Երկնիցն այդ պարգեւ,
Անուշի՛կ իմ երգ, քե՛զ է պարգեւեր.
Թող բոցը հասնի, փեռեկէ՛ ամպեր,
Որ ծագի արեւ:

10 Յունիս 1889

* * *

Եթէ տեւ ամպերն արեւը ծածկեն,
Ամպոտ երկընձին չըցուան շողեր,
Թէ մութ գիշերին չըծագին աստղեր,
Կ'անհետի՞ն միթէ նո՛րա երկնքէն:

Եթէ յաւիտեան չըտեսնեմ ես քեզ,
Մտքէս անհետին ոսկի երազներ,
Փետեկեն սիրտըս, տանին իմ յոյսեր,
Կ'անհետի՞մ միթէ քո սէրը սրտէս:

Նոյեմբեր 1889

Հ Ա Ր Ո Ւ Ս Տ Ի Շ Խ Ա Ն

(Նմանողաբար գերմաներէնի)

Շահապիւանի սիրուն հովտաց մէջ
Զարկեր են վրաններ արփայ, նախարար.
Նաւասարդն է, մեծ բերկրամեհով անվերջ
Կը հրմուին ամէնք ուրախ, հաւասար:

Նախարար, իշխան, կուսակալ ու պետ,
Հովասուն հովտում՝ բարձերուն բազմած
Կը խօսին անուշ ամէնքն իրար հետ.—
Որո՞ւ երկիրն է բարութեամբ լցուած:

«Շրճեղ է երկիրս», ասաց յաղթական
Ծոփաց իշխանը. «Զօրաւոր, հարուստ,
Ոսկեճոյլ լեռներ վերել կ'ամբառնան,
Հանանչ կը սփռեն ցոլուն՝ ամենուստ»:

«Հասկաքուռ ցորեան՝ զարդն է ճոխ երկրիս»,
Կանչեց նագելով՝ մեծ կամսարական,
«Շիրակայ դաշտի ոսկի հասկերիս
Բերքով ապրեցաւ շատակեր Շարան»:

Վիպասան բերնով Գողթնայ տէրն ասաց.
«Գինեւէտ երկիր, դուն գուսանական,
Քո պէս այլ մի դրախտ ո՞ւր կայ փառապանծ,
Կենաց, բերկրութեան միակ օրօրան»:

Իսկ Մամիկոնեան իշխանը հանդարտ,
Զեռք դըրած կրծքին՝ ասաց սիրարան.
«Զէ՛, Տարօնն այնքան չունի շրճեղ զարդ,
Առատ պարգեւէն հարուստ բընութեան:

192-98

Զունիմ ես ոսկի, ա՛յ ալ գարդ ցորեան,
 Բայց ունիմ մի բան՝ որ ուժն է երկրին.
 Ես միշտ պատրաստ եմ իմ ժողովրդեան
 Պաշտպան կալ, պահել սուրբ եկեղեցին.

Ժողովուրդն ալ զիս սրտով կը սիրէ,
 Մի՛ եմք բոլորքս, վըտանգի ժամուն
 Ոսկեկուտ սըրտեր կ'ենեն պատեանէ,
 Իշխան, կը գոռան, տար մեզ, տար մահուն»:

Միւսներն ապշած, լուռ, ափիբերան,
 Լըռելու անկար՝ գոչեցին հապնեպ.
 «Ամենէն հարուստ դո՛ւ ես, ո՛վ իշխան,
 Երկիրըդ շողակն ունի քեզ ի դէպ»:

1889

ԿՈՐԻԻՆ ՄԿՐՏԻԶԵԱՆ